Պարույր Սևակ

Ձյունը

Սիրում եմ ես ձյունը:
Սիրում եմ ես ձյունը,
Երբ որ նա իջնում է
Անտես երկինքներից այս մայթերին,
Եվ մեծաքա՛յլ , դանդա՛ղ դու շրջում ես,
Ինքդ էլ չիմանալով անրջում ես
Այն, ինչ կյանքում վեհ է և անթերի:
Սիրում եմ ես ձյունը:
Երբ որ նա իջնում է,
Դու հիշում ես հանկարծ
Անցած տարիներիդ խայտանքը մանկական,
Եվ քաղցրորեն սիրտդդ քեզ տանջում է:
Դու հիշում ես հանկարծ
Երբե՛ք չմոռացված այն աղջկան,
Որի թարթիչներին իջած ձյունը
Լսելի է դարձրել սրտիդ բաբախյունը…
Սիրում եմ ես ձյունը:
Երբ որ նա իջնում է,
Ինքդ էլ չիմանալով՝ անրջում ես,
Որ գալիքը, վաղը, որ ապագան
Քեզ չտեսած անգամ՝

Ճանաչում է:
Եվ հաճույքից սիրտը դեղ խենթորեն ուռչում է.
Քաղցր է թվում, որ դու
Այս կյանքում չես ծնվել օրապակաս,
Որ ապրո՛ւմ ես, որ կա՛ս,
Որ շնչո՛ւմ ես…
Սիրում եմ ես ձյունը:
Սիրում եմ ես ձյունը,
Երբ որ նա իջել է,
Երբ իջել է նաև լռությունը,
Եվ մեծաքա՛յլ, դանդա՛ղ, լո՛ւռ շրջելով,
Դու զգում ես նրա
Փխրունության վրա
Քո մարդկայի՛ն մարմնի ծանրությունը...

II.1955թ.
Մոսկվա